ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2025 թվականի N 715 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ԱՐՏԱՇԱՏ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 55.1-ին հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածով, ինչպես նաև ելնելով Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) կառուցված «Արարատի մարզի Նարեկ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում» օբյեկտն իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ծրագրի շրջանակներում կառուցված «Արարատի մարզի Նարեկ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում» օբյեկտը՝ 101680101.17 դրամ հաշվեկշռային արժեքով,

որպես պետական գույք ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, վեցամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի Հայաստանի Հանրապետության անունից անհատույց օգտագործման պայմանագրի կնքման, հանձնման-ընդունման, պայմանագրից բխող գույքային իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և դրանք պետական գրանցման համար լիազոր մարմին ներկայացնելու հետ կապված աշխատանքների իրականացումը:

3. «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությանը՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրի նոտարական վավերացման, պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ